ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դեվշիրմեն օրինականացված պարտադիր հարկ էր, որով պարբերականորեն 15-17-րդ դարերում Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներից տղաներ էին հավաքում, որոնք բռնի կերպով մահմեդականացվում էին և շարունակական ազդեցության պայմանքում ամբողջությամբ տարանջատվում էին իրենց ազգային միջավայրից՝ վերջնականորեն դառնալով մահմեդական և ծառայեցվելով օսմանյան իշխանության կարիքներին:

Այս երևույթը ցայժմ հայ գիտնականների կողմից չի արժանացել մանրամասն ուսումնասիրության. առավել հայտնի է միայն ակադեմիկոս Մ. Զուլալյանի հոդվածը պատմա-բանասիրական հանդեսում[1], որը կարելի է համարել սույն հարցի ուսումնասիրության առաջին ու հիմնարար քայլը հայ ժամանակակից օսմանագիտության մեջ: Հայ հեղինակների մոտ այս հարկատեսակը ավելի հաճախ հանդիպում է մանկահափսք, մանկաժողով եզրույթների ներքո[2]: Որոշ արտասահմանյան գիտնականներ, դեվշիրմե համակարգը նկարագրելիս ու նրա զարգացման մասին խոսելիս, հիշատակում են միայն բալկանյան ժողովուրդներին ու չեն նշում, որ դեվշիրմեն կիրառվել է նաև հայերի հանդեպ[3]: Դա թերևս հետևանք է այն բանի, որ նրանց հայտնի չեն հայոց մեջ կատարված այդ հարկումների վերաբերյալ փաստերը, ինչը խոսում է այն մասին, որ հայ հիշատակարանները, որոնք միջնադարյան Արևելքի ուսումնասիրության հարուստ սկզբնաղբյուր են, պատշաճ կերպով ներկայացված չեն գիտական աշխարհի քննությանն ու ուսումնասիրությանը:

Ինչևէ, սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր չենք դրել անդրադառնալ հայոց մեջ դեվշիրմեի անցկացման հարցին: Ստորև փորձ ենք արել միայն ներկայացնել դեվշիրմե համակարգի սկզբնավորման պատմությունը:

Ժամանակակից պատմագիտության մեջ փնտրում են տարբեր բացատրություններ դեվշիրմե համակարգի առաջ գալը բացատրելու համար: Որոշ պատմաբաններ կարծում են, որ այս հարկատեսակը ծագել է

օսմանյան հետևակը բազմամարդ դարձնելու անհրաժեշտությունից, որ զգալիորեն պակասել էր Բայազեդ I-ի որդիների երկպառակության պատճառով: Այլոք դրա ի հայտ գալը պայմանավորում են օսմանահպատակ քրիստոնյա ժողովուրդներին մահմեդականացնելու օսմանյան պետության նկրտումներով[4]:

Օսմանյան որոշ պատմագիրներ փորձել են դևշիրմեի սկզբնավորումը ներկայացնել որպես սուլթանի հանճարեղ հորինվածք[5]. ինչպես օրինակ Սաադեդդինը[6] կամ «Ենիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմության» ձեռագրի անանուն հեղինակը[7]: Իսկ գերմանացի հետազոտող Բ.Պապուլիան դևշիրմե համակարգի սկզբնավորումը առաջ է բերում վենջիք համակարգից ու վերագրում Օրհան I-ի ժամանակներին[8]: Այս մոտեցումը իրավացիորեն քննադատել է Ս.Վբյոնիսը իր գրախոսականում[9]:

Փենջիք համակարգը Օսմանյան պետությունում գործում էր մանկահավաքից առաջ: Հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցրած զորահրամանատարները և զինվորները. գանձվում էր ռազմագերու արժեքի 1/5-ը[10]: Փենջիքը կիրառվում էր նաև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կա՛մ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կա՛մ համապատասխան փրկագին[11]: Այն սկիզբ է առնում Ղուրանից ու շարիաթի հարկային համակարգում մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը... Այն, ինչ նախատեսված է Ալլահի ու իր մարգարեի համար, ուղղվում է հասարակական կարիքների բավարարմանը, որոնք սահմանել է մարգարեն իր կյանքի ընթացքում ու որոնք սահմանում է իմամը նրա մահվանից հետո[12]»: Այսպիսով, սուլթաններն օգտագործում էին այդ իրավունքը ու պահանջում ավարի մեկ հինգերորդ մասը[13]:

Համաձայն օսմանյան պատմագիր Աշըքփաշազադեի՝ փենջիքը Օսմանյան կայսրությունում գործածության մեջ է դրվել Մուրադ I-ի ժամանակ: Նա հիշատակում է մի փաստ, երբ Մուրադի ականավոր զորահրամանատարներից Էվրենոզ բեյին հրաման էր տրվել սապատակել «անհավատների» երկիրն ու կենդանի ավարի մեկ հինգերորդ մասը հանձնել Մուրադին: Ինչպես հաղորդում է Աշըքփաշազադեն, ռազմագերիներն այնքան շատ էին, որ Չանդարլը Խալիլն առաջարկեց հանձնել վերջիններիս անատոլական թուրքերին, որպեսզի նրանց ուսուցանվի թուրքերեն լեզուն: Գերիները մահմեդականացվում էին և աշխատեցվում, իսկ հետո ուղարկվում Մուրադի մոտ[14]: Այսպես էլ կազմվում է, ըստ Աշըքփաշազադեի, ենիչերիական զորաբանակը:

Փենջիքով սուլթանին հասած գերիները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորաբանակն, այլև դառնում էին սուլթանի անձնական ստրուկները, նրա թիկնազորի անդամները և այլն:

Փենջիքը, սակայն, չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջը[15]: Պատճառն անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունն էր, որը ռազմական ուժի անընդհատ սաճ էր պահանջում: Այդ քաղաքականության մեջ կարճ դադար տեղի ունեցավ միայն 1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո[16]: Տասնամյա երկպառակտչական պատերազմներից հետո Մեհմեդ 1-ի օրոք (1413-1421թթ.) շարունակվեցին օսմանյան նվաճումները, սակայն արդեն ներքին այլ պայմաններում: Վաղ ավատատիրական հարաբերությունները վտանգություններ էին կրել օսմանյան հասարակությունում. հրաժեշտ էր տրվել զարգացման թե՛ ցեղային, թե՛ սելջուկյան մոդելներից:

Նոր պայմաններում, չնայած օսմանյան անվիճելի հաջողություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը: Նվաճումը սկսվում էր կիսաքոչվորների ասպատակություններով, որոնց գլխավոր նպատակը կողոպուտն էր ու գերեվարությունը, և վերջ ի վերջո վերափոխվում նոր տարածքների համար պատերազմի: Օսմանյան ագրեսիան, որը տարվում էր «արդար կրոնի տարածման» նշանաբանով, նոր հողեր գրավելու նպատակ էր հետապնդում, որոնք այնուհետև բաժանվում էին որպես պայմանական կամ մշտական տիրույթներ՝ ձևավորելով ավատատիրական նոր դասակարգ: Նոր նվաճված շրջանում ընտրյալները ստանում էին վիթխարի հողային տիրույթներ՝ խասեր* կամ մյուլքեր, իսկ սիպահիները, որոնք հիմնական ռազմական ուժն էին հանդիսանում, մասնակցում էին ռազմական գործողություններին համաձայն այն պայմանների, որոնցով նրանց էին տրամադրվել իրենց հողակտորները՝ թիմարները կամ զեամեթները[17]: Սա բերեց նրան, որ այլևս անհնարին դարձավ զանգվածաբար ստրակցնել գրավյալ տարածքի ժողովրդին այնպես, ինչպես դա անհրաժեշտ էր օսմանյան բանակին իր զավթողագործությունը շարունակելու համար: Դա կնշանակեր ավատատիրական տիրույթները գրկել աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակասում էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այդ ժամանակաշրջանում հիմնվում էր վարչական ապարատը, ձևավորվում սուլթանի արքունիքը, որն արդեն մեծապես տարբերվում էր հին ժամանակների բեյլիքի բարբարոսական ճամբարից: Այդքան ծախսերի համար չէր կարող բավարար լինել գերիների վաճառքից եկող ոչ մշտական, անկայուն եկամուտը: Ինչպես և բոլոր պետություն կազմող հասարակություններում, այստեղ ևս պետք էր ապահովել կայուն, մշտական եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին հպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական հաջողութ-

յունների ու տարածքային ընդարձակմանը՝ ռազմագերիների ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով աղքատացավ ռոճիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Երկրորդ գործոնը, որը նույնպես ունի մանրամասն բացատրության կարիք, օսմանյան պետությունում կրոնա-էթնիկական իրավիճակն էր: Այն իր սահմաններում ներառում էր մահմեդականների և քրիստոնյաների, ընդ որում վերջինների համամասնությունն ու զանգվածը նորանոր նվաճումների հետևանքով անընդհատ աճում էր, ինչը միջին դարերի համար լուրջ խնդիր էր: Օսմանցիների նախորդները, անկախ այն բանից, թե իրենց պետական կազմավորումը տեղի է ունեցել ըստ եվրոպական մոդելի, ինչպես օրինակ Բյուզանդիան և Բուլղարիան էր, կամ ասիականի՝ ինչպես Իրանը և Սելջուկյան սուլթանատը, համախմբում էին իրենց տարակազմ բնակչությունը համաձայն մեկ կրոնի սկզբունքի: Օսմանյան կայսրությունը չէր կարող կիրառել նույն սկզբունքը: Ի հայտ գալով Փոքր Ասիայում՝ այն զարգացրել էր բռնատիրության մի տարբերակ, որի պետական կրոնը մահմեդականությունն էր: Սակայն դեպի Բալկաններ տարածվելով՝ այն ներառեց նաև քրիստոնյա ժողովուրդներ, որոնք քանակական առումով գերազանցում էին մահմեդականներին: Եվ նոր նվաճված տարածքներում իշխանությունը պահպանելու համար օսմանյան պետությունը ջանում էր արագ կերպով ավելացնել մահմեդական տարրը: Սակայն դեռ առաջին քայլերը ցույց տվեցին, որ մահմեդականացման դասական միջոցները, որոնք կիրառվում էին այն ժամանակվա մահմեդական հասարակություններում, այստեղ՝ Բալկաններում, այդքան էլ արդյունավետ չեն: Դրա պատճառը մահմեդականության դեմ ներքին դիմադրությունն էր, որը հավանաբար բխում է բալկանյան ժողովուրդների պետականաստեղծ երկար պատմությունից և գյուղատնտեսական հարաբերությունների զարգացված լինելուց[18]: Այնտեղ քրիստոնեությունը հնուց ի վեր հաստատված էր որպես գաղափարախոսություն, որի հետ համապատասխան ստեղծվել էր կենցաղային, իրավական, բարոյական ու ավանդական նորմերի միջավայր: Մահմեդականությունը, որն ի հայտ է եկել քոչվորական կենցաղի արմատներ ունեցող տնտեսություններով հասարակություններում, չէր կարող դյուրությամբ ներմուծվել այստեղ: Փոքր Ասիայից եվրոպական տիրույթներ և կամ այդտեղից Փոքր Ասիա բնակչության տեղափոխումները արագորեն ցույց տվեցին իրենց անարդյունավետությունը[19]: Մահմեդական վերաբնակիչ խմբերը դժվար էին համակերպվում նոր պայմաններին, համաձայն որոնց պետք է ընդմիշտ անցնեին նստակյաց կյանքի: Վերաբնակիչների նշանակալի մի մաս, ինչպես օրինակ յուրյուքները, շարունակեցին իրենց քոչվորական կյանքը և 16-րդ դարից հետո[20]: Իսկ բալկանյան ազգաբնակչության բռնագաղթը Փոքր Ասիա չէր կարող լինել անսահմանափակ, քանի որ բեբքատու շրջանները կգրկվեին աշխա-

տևանքային ձեռքից: Հիմնական մեթոդները, որոնց օգնությամբ օսմանցիները ջանում էին ենթակայության մեջ պահել իրենց թվապես գերակշռող գրավվյալ ժողովուրդներին, համաձայն թուրք պատմաբան Մ.Թ.Գյոքբիլգինի, ենիչերիական զորաբանակում զինվորական ծառայությունն էր ու մահմեդականացումը[21]:

Բալկանյան երկրների արիստոկրատիայի մի մասի մահմեդականացումը օգտակար կերպով անդրադարձավ օսմանյան ղեկավար մոդելի կայացման վրա: Մահմեդականացվածները ներմուծեցին ղեկավարման փորձ ու ավանդույթներ օսմանյան հասարակություն, փորձ, որը ձեռք էր բերվել սլավոնա-բյուզանդական քաղաքակրթության երկարատև զարգացման արդյունքում[22]: Սակայն նրանք շատ սակավաթիվ էին, որպեսզի ազդեցություն թողնեին ընդհանուրի վրա: Բացի այդ օսմանցիները վախենում էին թողնել նրանց իրենց ազգային միջավայրում, որտեղ նրանք կարող էին գլխավորել հակաօսմանական դիմադրական ելույթներ նոր նվաճված տարածքներում: Սկանդերբեգն Ալբանիայում հաստատեց այդ մտահոգությունները[23]:

Օսմանյան իշխանությունը գործի էր դրել մահմեդականացման իր բարդ մեխանիզմը Բալկաններում, սակայն հակառակ դրա գոյությանը քրիստոնյաների ու մահմեդականների միջև հարաբերակցությունը անհնար էր կարճ ժամկետում փոխել հօգուտ վերջինների: Բացի այդ 15-րդ դարի առաջին կեսին օսմանյան պետությունում տղամարդկանց վիթխարի պահանջարկ կար: Օսմանցիները սկսեցին իրենց հեծյալ աշխարհազորում օգտագործել քրիստոնյա սիպահիներին, ինչը լիովին հակասում է շարիաթին: Ղեկավար ապարատ, ինչպես և արքունիք, ոչ մահմեդականներ նշանակելը նույնպես շարիաթի ոտնահարություն էր[24]: Սակայն բանը դրանում չէ. օսմանյան տիրակալները, ինչպես և այդ ժամանակների ամեն տիրակալ, բազմիցս հեշտությամբ խախտել են կրոնական նորմերը, եթե դա բխում էր իրենց իշխանության շահերից: Սակայն կար խնդիր, քանի որ քրիստոնյաների քանակական գերակշռության դեպքում նրանց ուղղակի ու զանգվածային ներմուծումը վարչական ապարատ ու արքունիք կարող էր հարցականի տակ դնել պետության մահմեդական բնույթը և արգելակել նրա էքսպանսիոնիստական քաղաքականությունը:

Այս իրավիճակում, ելնելով պետական ու ռազմական ապարատում մարդկային ռեսուրսների խիստ կարիքից, օսմանյան իշխանությունը ճիշտ ժամանակին, արագ ու նպատակային կերպով քրիստոնյաների մի մասի մահմեդականացնելու ձև գտավ: Այն սկսեց բռնությամբ հավաքել քրիստոնյա բնակչության երեխաներին, որպեսզի մահմեդականացնի և դարձնի իր զինվորները: Սկզբնապես քրիստոնյա երիտասարդության հազվադեպ և փոքրաքանակ հավաքները դարձան հաճախակի և զանգվածային ու ի վերջո օրինականացվեցին որպես պարտադիր հարկ:

Եվ ամեն անգամ, ամեն նվաճման հետ մեկտեղ կրկնվում էր փենջիքից դեվշիրմե անցման գործընթացը: Այսինքն, սկզբում նվաճված տարածքի բնակիչները համարվում էին ռազմագերի, և նրանցից հավաքում էին փենջիք: Ապա այդ տարածքների ամրագրումից հետո, բնակիչները դառնում էին Օսմանյան կայսրության հպատակներ, ու նրանց հանդեպ արդեն կիրառվում էր դեվշիրմե համակարգը:

Որպես այս մեխանիզմի կիրառման օրինակ կարելի է մատնանշել նաև Հայաստանի դեպքը: Այսպես, Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք, թե. «...Ի թվին ՋԿԸ (1519թ.) բարկութիւնն աստուծոյ սաստկացաւ և սուլդան Սելիմն տղայ ժողուեց ի քրիստոնէից[25]»: Սելիմ սուլթանին որպես մանկահավաք սահմանող հիշատակում է նաև 17 դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին («...ե նստաւ ինքն թագաւոր սուլթան Սէյլիմ ամս տասներեք, որ սահմանեաց գտողայքն ժողովել[26]»):

Եթե ընդունենք, որ «մանկահավաք», «մանկաժողով» եզրերը օգտագործում ենք ոչ թե որպես զուտ տղաների հավաքելու երևույթը նկարագրելու, այլ որպես «դեվշիրմե», «արյան հարկ», որը հպատակ քրիստոնյա ազգաբնակչությունից պարբերաբար հարկման ինստիտուտ է, ապա մենք որպես դեվշիրմեի սկիզբ ընդունում ենք 1531 թվականը համաձայն Անանունի Սեբաստացու 16 դարի ժամանակագրության, թե «..Ի թվին ՁՁ (1531) սղայ ժողուեցին ի քրիստոնեից,..[27]», կամ էլ 1531 թվականի մի ձեռագրի հիշատակարանի («Թվին ՋԾ (=1531) Սուլթան Սուլեյմանն.., ենիչարաս համար տղայ ժողվեց ի հայոց ազգէս..[28]»):

Այսպես, օսմանցիները Հայաստանի տարածք մուտք են գործել 1514թ. Չալդիրանի ճակատամարտից հետո ու դեռ երկար տարիներ Հայաստանը եղել է պատերազմական դաշտ Իրանի ու Օսմանյան Կայսրության միջև: Ի նկատի ունենալով այն, որ դեվշիրմեն համարվում է կայսրի հպատակ քրիստոնյաներից հավաքվող հարկ[29], մենք 1519 թվականով թվագրվող մանկահավաքի առաջին նախադեպը չենք կարող համարել դեվշիրմե: Սա փենջիք համակարգի կիրառություն է, քանի որ 1519 թվականին Արևմտյան Հայաստանը օսմանցիների համար ռազմադաշտ էր և հետևաբար հայերը գերված ժողովուրդ էին, որոնց մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին:

Իսկ որ փենջիքը կիրառելով՝ օսմանցիներն այնուամենայնիվ գործում էին ընտրողաբար ու հավաքում էին միայն տղաներ, արդեն խոսում է դեվշիրմեի նրանց հարուստ փորձի մասին, որը նրանք ձեռք էին բերել Բալկանյան թերակղզում: Այդպիսի բան լայնորեն կիրառվել է փենջիքից դեվշիրմե ինստիտուտի անցման փուլում և նախորդ ժամանակներում և վկայված է Լ.Հալքոքոնդիլի կողմից, համաձայն որի Նովո Բոդոյի գրավման ժամանակ 1467թ. օսմանցիները ենիչերի վերցրեցին 320 երեխա, իսկ Պելոպոնեսից՝ 200[30]:

Այն, որ դեվշիրմեն սկզբնական փուլում օգտագործվում էր փենջիքի պակասը լրացնելու համար երևում է նաև Յակով Պրոմոնտորիո դե Կամպիսի օսմանյան պետության մասին գրվածքից, որը հրապարակվել է 1475թ. և նկարագրում էր 2-3 տասնամյակ առաջ եղած իրադրությունը: Նա գրում է, որ ենիչերիական զորքը հավաքագրվում էր տարբեր տարածքներից գերված երեխաներից, իսկ երբ գերի չկար, սուլթանը համալրում էր ենիչերիական զորամասերը իր սեփական քրիստոնյա հպատակների երեխաներով[1]: Դե Կամպիսի այս տեղեկությունն, որը վերաբերվում է Մուրադ II-ի կառավարման (երբ հավանաբար օրենքի ուժ էր ստացել դեվշիրմեն) և Մեհմեդ II-ի կառավարման սկզբի տարիներին, ցույց է տալիս, որ հիմնական նորակոչիկները փենջիքից էին, սակայն դեվշիրմեն բացառված չէր: Սրա օգտին է խոսում նաև այլ բնույթի մեկ սկզբնաղբյուր՝ թիմարական տիրույթների 1455թ. ընդարձակ նկարագրությունը (աշխարհագիրը): Թիմարատերերի հետ մեկտեղ գրանցված են և մի քանի ենիչերի, որոնց գրանցել են անվամբ և ծնված քաղաքով: Այնտեղ հանդիպում ենք ենիչերիներ Ալի Ֆիլիբելի (այսինքն՝ Պլովդիվցի), Յուսուֆ Ստանիմաքլու (այսօրվա Ասենովգրադ), Մուստաֆա Նեգրոպոնցի, Յուսուֆ Ռադոմիրցի, Թիմուրթաշ Ստրումիցացի, ինչպես նաև Քարաջա Մաջար, Դոդան Մաջար և այլն[2]:

Այն ժամանակ, երբ Մաջար անունը, որն անկասկած էթնիկական հատկանիշ է մատնանշում (մաջար-հունգարացի), ցույց է տալիս որ Միջին Եվրոպայում օսմանյան ագրեսիայի ընթացքում ենիչերի են հավաքել փենջիքի միջոցով, օսմանյան տիրույթների կենտրոնական քաղաքներից ծագումը հուշող անունները վկայում են դեվշիրմեով ենիչերիական զորաբանակ մտցված երիտասարդության մասին:

Երկպառակտչական պատերազմները, որոնք տեղի ունեցան 15-րդ դարի առաջին տասնամյակում, էական նշանակություն ունեցան դեվշիրմեի զարգացման համար: Օսմանյան ժամանակագիրները տեղեկացնում են, որ Մուսային զորքում ներառվել էին 7 000 ենիչերի՝ թվաքանակ ինքնին չափազանց մեծ, որ դա հավաքագրված լիներ փենջիքի միջոցով[3]: Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակ է սկիզբ առել ոչ մահմեդական երիտասարդության բռնի զանգվածային հավաքագրումը: Չնայած այս դեպքում էլ այս բնակչությունը նույնպես հավաքագրվում էր թերևս որպես ոչ թե հպատակներ, այլ ռազմագերիներ, քանի որ իրենց հողերը դարձել էին պատերազմական գործողությունների թատերաբեմ և պատերազմող կողմերի զինվորները իրենց վերաբերվում էին որպես նոր նվաճված տարածքների բնակիչների:

Այս ամենը ցույց է տալիս, որ դեվշիրմե համակարգը ամենևին էլ օսմանյան սուլթանների միանվագ հորինվածքը չէ:

Դեվշիրմեի երևան գալն ու գործադրության մեջ դրվելը պայմանավորված էին պատճառների բարդ համակարգով, որը ծագում էր օսման-

յան պետության հասարակական, կրոնական ու ազգային պայմանների յուրահատկություններից: Այն հակասում էր շարիաթին[34], բայց հաջող կերպով լուծում էր ագրեսիայի ընթացքում բանակում ու ղեկավար ապարատում մարդկային ռեսուրսների տեսակետից անհետաձգելի խնդիրներ: Շարիաթն այս անգամ էլ անտեսվեց օսմանյան պետության ուղղակի շահերը բավարարելու համար: Որպես փենջիք համակարգի շարունակություն դեվշիրմեն ըստ էության մահմեդական աշխարհում ստրկական ինստիտուտի[35] նմանօրինակ շարունակություն էր. կենտրոնական իշխանության կարիքներն ապահովելու համար ստրուկների հավաքման ձև, որը տեղի էր ունեցել յուրահատուկ պատմական պարագաներում՝ սկիզբ առնելով Եվրոպայի հարավ-արևելքում 14 դարի վերջին և 15 դարի սկզբին օսմանյան իշխանության հաստատման արդյունքում և ապա տարածվելով քրիստոնյա բոլոր հպատակների վրա:

ARTAK SHAKARYAN

ABOUT THE ISSUES OF THE INCEPTION OF THE DEVSHIRME SYSTEM

The article represents some basic questions regarding the inception of devshirme levy system, periodical hoy-tribute, taken from Christians in the Ottoman Empire in 15th - 16th centuries. Based on facts collected from Armenian medieval manuscripts, Ottoman documents, published in Bulgaria, as well as narrative sources, author analyses some main factors, which influence was crucial for the inception of devshirme. Author concludes that the devshirme system was instituted in the newly occupied territories only after having practiced the pencik system, one-fifth tax, for a while, and that devshirme was not a brand new "invention" of some Ottoman sultans, rather, it was a further development of the pencik system.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զուլալյան, Մ., «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1959, #2-3, էջ 247-256:
2. Տես՝ Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկիզբ մինչև 1784 թվականը), Գ հատոր, Երևան, 1984; Օրմանյան Մ, Ազգապատում, հատոր Բ; Լեո, Երկրների ժողովածու, Երրորդ հատոր, Գիրք առաջին, Երևան, 1969; Մ.Զուլալյան, նշվ.աշխ.:
3. Օրինակ. Gibb H.A.R. & Bowen Harold, Islamic Society and the West, Volume I, Part 1, London, New York, Toronto, 1951, որը համարվում է հիմնարար աշխատություն միջնադարյան Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրման տեսակետից:
4. Георгиева Ц., Еничарите в българските земи, София, 1988, стр 68.

5. Նրանք, ենիչերական զորաբանակի ստեղծման պարագաները նկարագրելիս, տեղեկացնում են, որ յայս զորքը աչքի էր ընկնում իր վերին աստիճանի անկարգապահությամբ, ինչը ստիպեց Սուրաղ I-ին կազմավորել նոր բանակ (ենի չերի): Համաձայն հեղինակների բոլոր քաղիներին հրամաններ են ուղարկվում ոչ մահմեդականների միջև պատանիների հավաքի վերաբերյալ: Այսպիսով հավաքվում է հազար հոգի, որոնք էլ կազմում են նոր զորքի կորիզը:

6. Петросян И.Е., К истории создания янычарского корпуса, Тюркологический сборник 1978, М., 1984, стр. 194.

7. Տես. Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели Петросян И.Е., Москва, 1987.

8. Papoulia B., Ursprung und Wesen der "Knabenlese" im osmanischen Reich, Munich, 1963, p.71.

9. Ավելի մանրամասն տես. Vryonis S.,Review of Upsprung and Wesen by B.Papoulia, Balkan Studies, 5 (1964), p. 145-153.

10. Шамсутдинов А., Проблема становления османского государства по турецким источникам вв., Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. Орешковой С., Москва, 1986, стр. 35.

11. Զուլայան Մ., նշվ. աշխ., էջ 248.

12. Толкованние священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42.

13. Vryonis S., Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.227-228.

14. Петросян И., там же, стр. 193.

15. Ercan Y., Devşirme sorunu, Belletten, Aral• k, 1986, s.712.

16. 1402թ. օսմանյան սուլթան Բայազիդ I-ը ծանր պարտություն կրեց Լենկ Թեմուրի զորքերից (Uzunçarşılı I.H., Osmanlı Tarih, Ankara, 1947, c.1, 166):

- թիմար – մինչև 20 000 աքչե եկամուտ բերող ավատ;
- զեամեթ – 20 000-ից մինչև 100 000 աքչե եկամուտ բերող ավատ;
- խաս – 100 000-ից ավել եամուտ բերող ավատ;
- մյուլք - ավատ, որի տերն այն կարող է վաճառել, թողնել որպես ժառանգություն կամ նվիրել մեկ այլի;
- սիպահի – օսմանյան զինվորական համակարգում հեծյալ զինվոր, որը ստացած թիմարի դիմաց պարտավոր էր մասնակցել պատերազմների (աղբյուրը՝ Pakalin M.Z., Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü, Milli Eğitim Basımevi, Istanbul, 1971, c.1,2,3):

17. Мутафчиева, В., Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962., стр. 33-35.

18. Георгиева, Ц., там же, стр. 69-70.

19. Այս մասին ավելի մանրամասն տես. Тодоров Н., Балканский город 15-19 веков: социально-экономическое и демографическое развитие, Москва, 1976.

20. Երեմեն Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 181-186:

21. Радушев Е., Место вооруженных сил в структуре османской феодальной системы на Балканах, Османская империя: государственная власть и социально-политическая структура, под ред. Орешковой С, (сборник статей), Москва, 1990, стр. 112.
22. Георгиева, Ц., там же, стр. 70.
23. Սկանդերբեգ (Գիորգի Կաստրիոտի, Սկինդեր Իվանովիչ)՝ մոտ 1405-1468, ալբանացի իշխան, թուրք զավթողների դեմ ալբանացի ժողովրդի պայքարի հայտնի ղեկավար: Նա սլատանի հասակից սուլթան Մուրադ I-ի ժամանակ ենիչերի էի վերցվել:
24. Георгиева, Ц., там же, стр. 70.
25. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169:
26. Աղանյանց Դ., Գիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 71:
27. Հակոբյան Վ., նշվ.աշխ, էջ 169:
28. Ղուկասյան, Մ., նշվ. աշխ., էջ 251:
29. Pakalin M.Z., ibid., c.I. s.444-448.
30. Георгиева Ц., там же, стр. 74.
31. По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител Петър Петров, Част първа, София, 1987, стр. 216-217.
32. Георгиева Ц., там же, стр. 73.
33. Георгиева, Ц., там же, стр. 71.
34. Wittek P.. Devshirme and sharia, BSOAS, 1955. XVII/2, p.271-278; Inalcik H., Studies in Ottoman Social and Economic History, VII, Servile labor in the Ottoman Empire, London, 1985, p. 25-52.
35. Ավելի վաղ ժամանակներում մահմեդական աշխարհում ստրկական ուժի օգտագործման մասին տես, Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, Երևան, 2003; Vryonis S., Seljuk Gulams and ..., p.224-252.